

Աշխարհագրության դասի օրինակելի պլան

Դասի թեմա՝ Ժամային գոտիներ

Ուսուցողական նպատակ՝ Ծանոթացնել ժամային գոտիների առաջացման պատճառներին, առանձնացման սկզբունքներին, կարողանալ կատարել հաշվարկային խնդիրներ ժամային գոտիների վերաբերյալ:

Ձաբգացնող նպատակ՝ կատարել եզրահանգումներ, տեսական և գործնական գիտելիքների վերլուծություն և կիրառում, ուսումնական նյութից ստացած գիտելիքներն ու կարողությունները կիրառել անձանոթ իրավիճակներում:

Դաստիարակչական նպատակ՝ համակարգված աշխարհայացք, ճանաչել աշխարհագրությունը որպես երկները բացահայտող գիտություն, տարածական աշխարհը նկատել:

Դասի տիպը, տեսակը՝ Գիտելիքների, կարողությունների և հմտությունների կատարելագործման, ընդհանրացման և համակարգման դաս.

I փուլ **Խթանում.**

Ներածություն Տևողությունը՝ 5 րոպե:

Նպատակ՝ աշակերտների մտածողության ակտիվացում, հետաքրքրության առաջացում, հին և նոր դասերի միջև կապերի հաստատում:

Մեթոդական համակարգ՝ ֆրոնտալ հարցում.
Թվարկեք Արեգակնային համակարգի մոլորակները
Ի՞նչ պտույտներ է կատարում Երկիրը մոլորակը:

II փուլ

Հին նյութի ստուգում: Տևողությունը՝ 15 րոպե

Նպատակ՝ գիտելիքների և կարողությունների ստուգում:

Մեթոդական համակարգ՝ Մատգրոհ

Աշակերտի կողմից դասանյութը ներկայացվում է 3 մակարդակով՝

1. Հիմնական հասկացությունների ներկայացում,
2. Դասի մասերի միջև տրամաբանական կապերի և պատճառահետևանքային կապերի բացահայտում
3. Սխեմայի կազմում, գծակարգի մեկնաբանում և այլն

II մաս **Նպատակ՝** նոր նյութի մատուցում, կարողությունների ձևավորում, տրամաբանական և աշխարհագրական մտածողության զարգացում: Անվանակարգի ներկայացում:

Մեթոդական համակարգ՝ շրջված դասարան

Գրատախտակ՝ ուսուցչի գրառումների համար, դասագիրք, քարտեզներ, ուրվագծային քարտեզ, բաշխիչ նյութեր, աշխատանքային տետրեր, համակարգչային ծրագրեր:

Տեսանյութի ցուցադրում

Խնդիրների լուծում:

III փուլ Կշռադատում

Նոր նյութի ստուգում և ամրապնդում

Տևողությունը՝ 5 րոպե

Նոր նյութի ստուգում և ամրապնդում Տևողությունը՝

Նպատակ՝ գիտելիքների ամփոփում, արդիականացում, դրանց Էկոլոգիական և մշակութային դերի բացահայտում: ընդհանրացնող միտք ուսումնասիրվող երևույթի գեղագիտական արժեքի բացահայտմամբ: Բլից- հարցում, անհատական թեստերի կամ քարտերի լրացում, տևային աշխատանքի հանձնարարում:
Գրատախտակ

PlayPosit –գիտելիքի ստուգում, ուսուցողական գնահատում:

Քարտերի վրա նշված են դասի կարևոր մտքերը, որը համապատասխանում է տեսանյութի բովանդակությանը: (չխոսող, չսող երեխայի համար + մեկ օժտված երեխա)--Դասարանում սեղանները դասավորել կիսաշրջանաձև, պատրաստել տեսանյութ դասի վրաբերյալ-

դասարանում կա չտեսնող երեխա +Օժտված երեխա), նա լսում է դասը: Պատրաստել ժամացույց, որի օգնությամբ նկարել չկարողացող երեխան ցույց կտա տարբեր քաղաքների գոտիական ժամանակները: (երեխա, որը չի կարողանում նկարել):